ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 153-Ա
04 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2021Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ ՈՒ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 83 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի N1064-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները

Որոշում եմ

1. Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության մարզային համակարգում ընդգրկել հակահամաճարակային հսկողության 2 կայանները, անասաբուժական սպասարկման 2 կենտրոնները և մարզային հիդրոօդերևութաբանական ծառայությունը:

2. Հանձնարարել համակարգում ընդգրկվող կազմակերպությունների ղեկավարներին.

ա/ ապահովել ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողությունը և տեղեկատվության ու զեկույցների ժամանակին ներկայացումը համապատասխան մարմիններին՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի

-նորմալ ճառագայթային, քիմիական և համաճարակային իրավիճակների պայմաններում՝ շաբաթը 1 անգամ,

- ճառագայթային, քիմիական և համաճարակային իրավիճակների վատթարացման դեպքում՝ անհապաղ, իսկ այնուհետև 4 ժամը մեկ անգամ:

3. Որոշման կատարման հսկողությունը թողնել ՀՀ Վայոց ձորի մարզպետի վրա:

10/6/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ք. Եղեգնաձոր